# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

<<11>> -----մայիսի-----------------2026թ. N ՄՊ/ 278 -Ա

ք. Արմավիր

### ՍԻՐԱՆՈՒՇ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման N 1 հավելվածի 3-րդ, 7-րդ և 9-րդ կետերը, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-Լ որոշմամբ հաստատված 3-րդ հավելվածի 20-րդ կետը և նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի 2026 թվականի մայիսի 11-ի զեկուցագիրը՝

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալի օգնական Սիրանուշ Մարգարյանին 2026 թվականի մայիսի 11-ին գործուղել քաղաք Երևան՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, տնօրենի հավակնորդների հարցազրույցին, որպես հանձնաժողովի անդամ մասնակցելու նպատակով:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Արայիկ Հակոբյանին՝ ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գործուղման ծախսերի հաշվարկումը և վճարումը:

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալի օգնական Սիրանուշ Մարգարյանին՝ գործուղումից վերադառնալուց հետո եռօրյա ժամկետում ներկայացնել հաշվետվություն գործուղման արդյունքների վերաբերյալ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ,**

Восстановимая подпись

X

ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ

**ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ** Подписано: GRIGORYAN ARAM 2509720082 **Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ**